ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № /19
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան <<23>> դեկտեմբերի 2021 թ.

Հայաստանի Հանրապետության Արտակարգ Իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ.Միրզախանյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ պետական մարմին), մի կողմից, <<Նաիրիտ Գործարան >>ՓԲԸ-ն, ի դեմս սնանկության գործով կառավարիչ Մուրադ Պետրոսյանի որը գործում է << Սնանկության դատարանի թիվ ԵՇԴ/0031/04/15 գործով 07.04.2021թ.-ի որոշման հիման վրա (այսուհետ՝ Կազմակերպություն), մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի № 2084-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի № 2084-Ն որոշմամբ նախատեսված՝237,862.4(երկու հարյուր երեսունյոթ միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր) դրամ գումարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը տրամադրվում է Կազմակերպության տեխնոլոգիական համակարգերում, տարողություններում և սարքավորումներում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանություն իրականացնելու նպատակով Կազմակերպության բոլոր աշխատակիցների 2021 թվականի հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների չվճարված աշխատավարձերը փաստացի հաշվարկված (ըստ յուրաքանչյուր աշխատակցի), 2021 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձի հաշվարկային հաշվարկը, և աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցումները՝ 2021 թվականի հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների նպաստների փաստացի հաշվարկները:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 Կազմակերպությունից ըստ անհրաժեշտության պահանջել և ստանալ տեղեկատվություն սույն Պայմանագրով սահմանված գործառույթների կատարման ընթացքի վերաբերյալ,

2.2. Պետական մարմինը պարտավոր է՝

2.2.2. << Օրենսդրությանը համապատասխան Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի № 2084-Ն որոշման շրջանակներում հատկացված գումարը:

2.3. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել պետական մարմնից Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի № 2084-Ն որոշման շրջանակներում վճարել իրենց հատկացված գումարը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

3. Վճարման կարգը և ժամկետները

3.1. Պետական մարմինը սույն Պայմանագրի 1.1. կետում նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից փոխանցում է Ընկերությանը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2(երկու)օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:Յուրաքանչյուր կողմցի տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	<<Նաիրիտ Գործարան>>ՓԲԸ
Դավիթաշեն 4-րդ թաղ.Ա.Միկոյան 109/8	Բագրատունյաց փող.70 շենք
ՖՆ գործառնական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 900011037844	Հ/Հ 2473602788050160
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 02228743
Գլխավոր քարտուղար	Անանկության գործով կառավարիչ՝
Լ.Միրզախանյան	Մ.Պետրոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.